

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռաւոր եւ Մերձաւոր Արեւելի գործերը

Ինչպէս յայտնի է, անցեալ դեկտեմբերի 8-ին Նապոնիան յանձնեց իր վերջնական պատասխանը Ռուսաստանին: Երկու կողմերից շարունակուած էին եռանդով մեծ պատրաստութիւններ անեղ կռիւ համար. թէ Նապոնիան և թէ Ռուսաստանը գնում էին ածուխի և ուտելիղէնների անազին պաշարներ, զօրքերի տեղափոխութիւններ էին տեղի ունենում, ուստի օֆիցերները Մանջուրիայում ձիեր էին գնում, եապոնացիները թողնում էին Վլադիվոստոկն և այլ ուսսական քաղաքներ. երկու պետութիւններն էլ ուժեղացնում էին խաղաղ Ովկիանոսի ջրերում իրանց նաւատորմիղը: Այդպէս Նապոնիան շտապեց 40 միլիոն ֆրանկով գնել Արգենտինեան հանրապետութեան համար շինուած նորագոյն սիստեմի երկու զրահակիրներ (Moreno և Riva Davia), որոնք արդէն դեկտեմբերի 27-ին ճանապարհ ընկան Kassuga և Nissin նոր անուանների տակ դէպի եապոնական ջրերը: Գնուած են մի քանի ընկերութիւններից նաև փոխադրական նաւեր: Ռուսաստանը ցայսօր ունի Պորտ-Արտուրում 7 զրահակիր, 7 յածանաւ, 12 աւանանաւ և 9 այլ տեսակի ռազմանաւեր. Վլադիվոստոկի ուսաց նաւատորմիղը բաղկացած է 4 զրահակիրներից և 1 փոխադրանաւից. մի-մի ուսական յածանաւեր կան և Դալնիում, Չեմուպո և Հարաւային Չինաստանի ջրերում. ճանապարհուել են Հեռաւոր Արեւելի ջրերը և արդէն անցել են Սուէցեան ջրանցքը ուսաց երկու զրահակիր, 2 յածանաւ և 11 աւանանաւ:

Բանակցութիւնների այդ միջոցում օգտուեց և Ամերիկան՝ կնքելով դեկտեմբեր 31-ին Չինաստանի հետ դաշնագիր, որով

համաշխարհային առևտրի համար բացւում էին Մանջուրիայում երեք կէտեր. Մուկդէն, Անդուն և Տաունկան, ուր արդէն Բուլ-վէլսը նշանակել է ամերիկական հիւպատոսներ:

Դեռ ամառուանից սկսած ռուս-եապոնական բանակցու-ցութիւնները քանի գնում սուր կերպարանք էին ստանում, իսկ յունուարի 21-ին Տոկիոից ստացուած հեռագրները ցոյց էին տալիս, որ այլևս յոյս չունեն խաղաղութիւնը պահպանելու վրայ: Ռուսաց զօրքերը դիմում էին դէպի Նալու գետի բերա-նը, Սիբիրի երկաթուղով դադարեցրուած էր առևտրական հա-ղորդակցութիւնը բուն Ռուսաստանի և Սիբիրիայի, Իրկուտսկից Մանջուրիայի զանազան կէտերն էին ժամանում նորանոր-գնդեր: Յունուարի 22-ին հեռագիրը յայտնեց, որ ռուսաց նա-ւատորմիդը դուրս է եկել Պորտ-Արտուրից:

Յունուարի 22-ին Պետերբուրգում եապոնական դեսպանը տեղեկացել էր ռուսական պատասխանի բովանդակութեան հետ և հեռագրով իմաց տուել իր կառավարութեան: Տոկիոում գու-մարւում է աւազների արտակարգ նիստ Միկադօի նախագա-հութեամբ, որի հետեանքն էր յունուարի 24-ին երկու պետու-թիւնների մէջ դիպլոմատիական յարաբերութիւնների խզումը, ինչպէս այդ երևում է ներքևում առաջ բերուած հեռագրից.

Պետերբուրգ: Կառավարական հաղորդագրութիւն: Անցած տարի Տոկիոի կարիններ՝ Խաղաղ Ովկիանոսի ափերի վրա հաւասարալիշու-թիւն եւ իրերի աւելի հաստատուն կարգ սահմանելու պատրուակով դի-մեց Վայսերական կառավարութեանը կորէական զործների վերաբերմամբ զոյուծիւն ունեցող դաշնագիրները վերաշինելու առաջարկութեամբ, եւ այդ բանին Ռուսաստանը տուեց իր համաձայնութիւնը: Թագաւոր Վայսի Բարձրագոյն հրամանով, այդ ժամանակամիջոցին Հեռու Արեւելքում փո-խաքայուծիւն հիմնելու պատճառով, Նապոնիայի հետ նոր համաձայնու-թեան նախագծի կազմելը յանձնարարուած էր զենեքալ-ադմուտնտ Ալեքսէ-եւին Տոկիոի ռուսական դեսպանի մասնակցութեամբ, որին յանձնարա-րուած էր բանակցութիւններ վարելը եապոնական կառավարութեան հետ: Զնայելով այն բանին, որ անցեալ տարւայ՝ օգոստոսին այդ առարկայի վերաբերմամբ սկսուած հայեացքների փոխանակութիւնը պահպանում էր բարեկամական բնաւորութիւն, ինչպէս յայտնի է, եապոնական հասարա-կական շրջանները, տեղական, նոյնպէս եւ արտասահմանեան մամուլը ա-մեն կերպ աշխատում էին պատերազմական յուզումնք առաջացնել եապո-նացիների մէջ եւ զրդել կառավարութիւնը դէպի զինաւորուած կոլւ Ռու-սաստանի հետ: Այդպիսի տրամադրութեան ազդեցութեան տակ, Տոկիոի կաբինետը սկսեց աւելի եւ աւելի պահանջկոտ դառնալ բանակցութիւննե-րի ժամանակ, ընդունելով միաժամանակ ամենաընդարձակ միջոցներ՝ պա-տերազմական դիրքի մէջ զնելու երկիրը: Այս բոլոր հանգամանքները ի-

հարկէ չէին կարող խախտել Ռուսաստանի հանգստութիւնը, բայց դրոցին նրան եւս իր կողմից էլ զինւորական ծովային կարգատրութիւններ անել։ Այնուամենայնիւ Հեռու Արեւելքում խաղաղութիւնը պահպանելու անկեղծ ցանկութեամբ ոգեւորուած, որքան այդ թոյլ էին տալիս նրա անվիճելի իրաւունքները եւ շահերը, Ռուսաստանը պատշաճաւոր ուշադրութեամբ վերաբերուեց Տոկիոյ կառավարութեան յայտարարութիւններին եւ պատրաստութիւն յայտնեց ընդունելու համաձայնութեան պայմանների հիման վրայ Սապոնիայի առաւելագոյն առեւտրական-տնտեսական դրութիւնը Կորէական թերակղզու վրայ, իրաւունք տալով նրան զինւորական ոյժով պաշտպանել այդ երկրի մէջ անկարգութիւնների դէպքում։ Միեւնոյն ժամանակ սակայն ճշտութեամբ պահպանելով իր քաղաքականութեան հիմնական սկիզբունքը Կորէայի վերաբերմամբ, որի անկախութիւնը եւ հողային անձեռնմխելիութիւնը ապահովոււմ էր որպէս նախընթաց համաձայնութիւններով Սապոնիայի հետ, նոյնպէս եւ ուրիշ պետութիւնների հետ կապուած դաշնագիրներով, Ռուսաստանը չէր կարող չպնդել 1) այդ հիմնական սկզբունքի փոխադարձ եւ անպայման ասպնդվութեան վրայ. 2) Ռազմագիտական նպատակներով Կորէական ցամաքի ոչ մէկ մասից չօգտուելու պարտաւորութեան վրայ, որովհետեւ դրա նման մի գործողութեան թոյլատուութիւնը որեւէ օտար պետութեան կողմից ուղղակի կը հակասէր Կորէայի անկախութեան սկզբունքին, եւ վերջապէս 3) Նաւարկելու կատարեալ ազատութեան պաշտպանութեան վրայ կորէական ջրանցքով։ Համաձայնութեան այդ մտքով մշակուած նախագիծը չգոհացրեց եսպոնական կառավարութեան, որը իր վերջին առաջադրութիւնների մէջ ոչ միայն խուսափեց պայմաններն ընդունելուց, որոնք երաշխաւորում էին Կորէայի անկախութիւնը, այլեւ միեւնոյն ժամանակ սկսեց պնդել, որպէսզի վերոյիշեալ նախագիծ մէջ մտցնուեն մանջուրական հարցին վերաբերեալ որոշումները։ Սապոնիայի այդպիսի պահանջները իհարկէ թոյլատրելի չէին կարող լինել։ Ռուսաստանի դիրքի հարցը Մանջուրիայում նախեստաջ վերաբերում է իրան Չինաստանին եւ ապա այն բոլոր պետութիւններին, որոնք առեւտրական շահեր ունեն Նրկնային Կայսրութեան մէջ. ուստի Կայսերական կառավարութիւնը վճռական հիմքեր չէր տեսնում կորէական գործերին վերաբերեալ Սապոնիայի հետ առանձին դաշնագրի մէջ մտցնելու այնպիսի որոշումներ, որոնք վերաբերում են ռուսական զօրքերով զբաւած շրջանին։ Կայսերական կառավարութիւնը մանաւաճառ որ չէ հրաժարոււմ ընդունելու Մանջուրիայի ժամանակաւոր զբաւման միջոցին թէ բողոքիսանի գերագոյն իշխանութիւնը այդ շրջանում եւ թէ պետութիւնների ձեռք բերած արտօնութիւնները Չինաստանի հետ նրանց կնքած դաշնագիրների հիման վրայ, որի մասին արդէն համապատասխան յայտարարութիւն արուել է օտար կաբինետներին։ Ի նկատի ունենալով այդ, Կայսերական կառավարութիւնը պատուիրելով Տոկիոյ ներկայացուցչին յանձնելու իր պատասխանը եսպոնական վերջին առաջարկութիւններին, իրա-

ւունք ունէր յուսալու, որ Տոկիօի կաբինետը ուշադրութեան կ'առնէ վերոյիշեալ խորհրդածութիւնների նշանակութիւնը եւ կը գնահատէ Ռուսաստանի արտայայտած ցանկութիւնը՝ խաղաղ համաձայնութեան գալ Մապոնիայի հետ. այն ինչ եապոնական կառավարութիւնը՝ չսպասելով մինչեւ անգամ այդ պատասխանի ստացման, վճռեց ընդհատել բանակցութիւնները եւ կտրել դիպլոմատիական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Նրա գործունէութեան այդպիսի եղանակից առաջանալիք հետեւանքների ամբողջ պատասխանատուութիւնը դնելով Մապոնիայի վրայ, Կայսերական կառավարութիւնը կը սպասէ անցքերի զարգացման եւ հէնց առաջին անհրաժեշտութեան դէպքում ամենակտրական միջոցներ ձեռք կ'առնէ իր իրաւունքները եւ չափերը պաշտպանելու համար Հեռաւոր Արեւելքում:

Այժմ շարագուշակ ամպեր են կուտակուում նաեւ Մերձաւոր Արեւելքում:

Մակեդոնական ժանդարմերիայի վերանորոգիչ և հրամանատար նշանակուեց իտալացի գեներալ Զիորըլիս, որ արդէն ներկայացաւ Սուլթանին և սիրալիբ ընդունելութիւն գտաւ նրանից: Այդ դիպլոմատիական սիրալիբութիւնը և պետութիւնների խիստ պահանջներին համակերպուելը չի խանգարում, որ Թիւրքիան նոր ձեւերով ձգձգի բեֆորմները հարցը. նա շարունակում է դիմումներ անել մեծ պետութիւններին, մատնանիջ անելով մակեդոնական յեղափոխականների, բուլղարական և սերբիական կառավարութիւնների մի շարք նախապատրաստութիւնների վրայ, որոնց նպատակն է, իբր թէ, զարնան պատերազմական գործողութիւն սկսել Թիւրքիայի դէմ: Այդ պատրուակով ինքն ևս պատրաստութիւններ է տեսնում և ուժեղացնում իր զօրքը և դիրքերը բուլղարական և սերբիական սահմանագլխի վրայ: Մի բան ճիշտ է, որ մակեդոնացիները չեն հաւատում թրքական բեֆորմի տակ կատարուող և կատարուելիք բեֆորմներին և արդէն ստացել են հոչակաւոր Գարիբալդիի որդու՝ գեներալ Րիչիոտտի Գարիբալդիի խոստումը՝ զարնան իր 10 հազ. կամաւորներով մուտք գործել Բալկանեան թերակղզին և միանալով բալկանեան ազգերի հետ՝ կզիւ մղել Օսմանեան լուծը խորտակելու և նրա փլատակների վրայ ռալկանեան ազգերի դաշնակցութիւն, ֆեդերացիա՝ հաստատելու Մակայն այդ ձգտումներին երևի հակառակ կը լինեն ոչ միայն մի քանի պետութիւններ, այլև գուցէ ինքը Իտալիան: Յամենայն դէպս զարուհը խաղաղութիւն չի բերելու և մերձաւոր Արեւելքին...

Լ. Ս.